

վայրերն եւ մարդկան կենցաղը: Եւ որովհետեւ հայ մարդ է արեամբ եւ զգածուամով, ամէնէն առաջ հայ ժողովուրդը փնտռած է իւր ճանապարհին վրայ: Փամանակը, երբ իւր ուղեւորութիւնը կը կատարէր Սիմէոն, հայ զաղթական կեանքի պատմական մէկ բուլէն էր. մայր երկիրը լքած՝ օտար երկնքի տակ իւր հանգիստը կը փնտռէ հայ ժողովուրդը. նոր զաղթավայրեր կը հաստատուին ամենուրեք: Յատկապէս այս տեսակէտով կը ստանան ուղեւորիս հաղորդագրութիւնները կարեւորութիւն:

Անիկա հետաքրքրուած է լայն չափով իւր ճանապարհին վրայ պատահած քաղաքներով եւ զննավայրերով: Առանց յոգնութենէ խոյս տալու՝ կը շրջի քաղաքներ, կը հարցաքննէ մարդիկ եւ կը քաղէ տեղեկութիւններ. «որչափ կացի անդ (ի Կ. Պոլիս), կը դրէ, օր մի չկացի ի տան. այլ ամէն օր երթայի յեկեղեցի մի կամ ի շէնք» (24): Դժբախտաբար տեղ տեղ, երկիւղով թէ ձանձրանալի կարող է ըլլալ, դիմած է համառօտախօսութեան: Չափազանց հետաքրքրական են իր նկարագրութիւնները Կ. Պոլսոյ, Վենետիկի, Հոմիի, Մուշի, Գահիրէի, Երուսաղէմի, Հալէպի եւ Լիովի մասին:

Ունեցած է Սիմէոն բարի սովորութիւնը, նշանակել յուշատետրին մէջ օրօրին ճանապարհորդական տպւնորութիւնները: Իր աշխատութեան ձեւի մասին հետաքրքրական են